Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԵԿՏՈՐ

Թիվ 4108-Լ 20.12.2018թ.

ՀՐԱՄԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններում, կանոնակարգերում և իրավական մյուս փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ կանոնադրության 54-րդ կետով և հիմք ընդունելով Համալսարանի Իրավաբանական կենտրոնի ղեկավար Ա.Ֆերոյանի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններում, կանոնակարգերում և մյուս իրավական փաստաթղթերում <<ՊՈԱԿ>> հապավումը և <<Պետական ոչ առևտրային կազմակերություն>> բառերը փոխարինել <<Հիմնադրամ>> բառով՝ անհրաժեշտ հոլովաձևերով:

2.Իրավաբանական կենտրոնի կանոնադրությունում <<վարչություն>> բառը փոխարինել <<Կենտրոն>> բառով՝ անհրաժեշտ հոլովաձևերով:

3.Հանձնարարել Համալսարանի Լրատվական վարչությանը և Անձնակազմի հաշվառման բաժնին կատարել սույն հրամանից բխող անհրաժեշտ գործողությունները:

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ